ՋԱՐՈՒՀԻ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ՈՒՐՈՒԳՎԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ – XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Հայերն Ուրուգվայում սկսել են հաստատվել XIX դարի վերջից: 1890 թ. այստեղ ժամանեց առաջին հայը՝ վանեցի Մանուկ Ազարյանը[1]: 1890-1910 թթ. Ուրուգվայ փոխադրվեցին մի քանի տասնյակ հայեր[2]: 1912 թվականից սկսած՝ երկրի մայրաքաղաք Մոնտևիդեոյում արդեն կային զգալի թվով մարաշցիներ, քեսաբցիներ, այնթապցիներ, զեյթունցիներ, կեսարացիներ, յոզղաթցիներ, որոնք առավելապես զբաղվում էին դերձակությամբ, կոշկակարությամբ և մանր առևտրով: 1915 թ. նրանք կազմակերպեցին դրամահավաք՝ ի նպաստ տարագիր հայերի, ստեղծեցին նաև Հայ բնակիչների Կենտրոն կազմակերպությունը, որին 1918 թ. հաջորդեց Հայկական Կենտրոնը: Վերջինս գոյատևեց մինչև 1921 թ.[3]:

Ուրուգվահայ գաղութի կազմավորման լայնածավալ գործընթացը սկիզբ առավ 1920-ական թթ., երբ Մեծ եղեռնից փրկված և Մերձավոր Արևելքի երկրներում ապաստանած հայ գաղթականների ստվար խմբեր սկսեցին տեղափոխվել Ուրուգվայ[4]: 1923 թ. հայության թիվն այստեղ արդեն հասնում էր շուրջ 3 հազարի[5]: Գաղութն ավելի ստվարացավ 1920-ական թթ. երկրորդ կեսին, երբ սկսվեց հայ գաղթականների երկրորդ մեծ հոսքը Ուրուգվայ: 1931 թ. գաղութում անցկացված մարդահամարի տվյալներով՝ Ուրուգվայում ապրում էր ավելի քան 4 հազ. հայ, իսկ 1940-ական թթ. սկզբին միայն Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտևիդեոյում բնակվում էր Արևմտյան Հայաս-

---

[1] Տես Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920-ական թթ.). Եռահատորյակ. Հատոր Երրորդ. Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղութները. Երևան, 2013, էջ 303:
[2] Տես նույն տեղում:
[3] Տես նույն տեղում, էջ 314:
[4] Տես Blas Nabel Pérez. Armenios en el Nuevo Mundo, Quito 1998, էջ 79:
[5] Տես Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 613:

տանի տարբեր քաղաքներից ու բնակավայրերից գաղթած շուրջ 1200 հայ ընտանիք կամ 6 հազ. մարդ[6]: Արդեն 1990-ական թվականների վերջին Ուրուգվայում ապրում էր 15 հազ.[7] հայություն, իսկ 2010-ական թվականների սկզբին ուրուգվահայության թիվը հասնում էր շուրջ 20 հազարի, որոնք հիմնականում կենտրոնացած էին երկրի մայրաքաղաքում[8]: Սակավաթիվ հայ ընտանիքներ էին ապրում նաև առողջարանային Պիրիապոլիս քաղաքում: Հայերի հիմնական մասը զբաղվում էր մանր առևտրով և արհեստներով: Սակայն կային նաև մի քանի խոշոր ձեռնարկատերեր (կոշիկի գործարանատերեր, մեծածախ առևտրով զբաղվողներ), ինչպես նաև բարձրորակ իրավաբաններ, բժիշկներ, հաշվապահներ, ճարտարագետներ, պետական ծառայողներ (1960-2000-ական թթ. երեք հայեր Մոնտևիդեոյի քաղաքային խորհրդի, երկուսը՝ երկրի դատական իշխանության անդամներ էին, մեկը՝ փոխնախարար):

Հայերն իրենց զգալի ներդրումն էին բերում նաև Ուրուգվայի գիտամշակութային կյանքի զարգացման գործին: Երկրի մտավորական շրջաններում լայն ճանաչում էին վայելում աստվածաբան Հակոբ եպիսկոպոս Գըլընճյանը, բառարանագետ Հարություն վարդապետ Թեքեյանը, պատմաբաններ Դանիել Կարամանուկյանն ու Ալբերտո Դիվրեջյանը, գրականագետ Հովհաննես Բոդուկյանը, իրավագետ Պետրոս Քյորօղյանը, երաժշտագետներ Ալվարդ Հակոբյանը և Կորյուն Ահարոնյանը: Վերջինիս Մոնտևիդեոյի քաղաքապետը 2010 թ. շնորհեց «Պատվավոր քաղաքացի» կոչում-շքանշան:

Ուրուգվայի մարզական կյանքում աչքի էին ընկնում շախմատի երկրի բազմակի չեմպիոն Սանվել Տինավորյանը, ծանրամարտիկներ Խերման Թոզճյանը և Ուրուգվայի 2009 թ. չեմպիոն Ալեն Ալայանը, ֆուտբոլային մարզիչ Սերխիո Մարգարյանը, որը ներկայումս Պերուի հավաքականի գլխավոր մարզիչն է:

Ուրուգվահայ գաղութի ընդլայնմանը զուգընթաց ձևավորվում էին նաև համայնքային կառույցները: 35 հոգուց բաղկացած նախա-

---

[6] Տես նույն տեղում:
[7] Տես Blas Nabel Pérez, նշվ. աշխ., էջ 79:
[8] Տես ՀՀ Արտաքին գործերի նախարարություն, Պատմադիվանագիտական բաժին, գործ N 328, էջ 11:

ձեռնող խումբը 1923 թ. հիմնեց ուրուգվահայության Գաղութային միությունը: Ընտրվեց միության 5 հոգուց բաղկացած վարչություն, որի կազմի մեջ մտան նոր կազմավորվող համայնքի աչքի ընկնող գործիչներ Կարապետ Զատիկյանը (ատենապետ), Արամ Ղուկասյանը, Հովհաննես Աթեչյանը, Ծերուն Գոլթուկյանը, Երվանդ Քարամանյանը: Ուրուգվայի կառավարության որոշմամբ 1930 թ. հուլիսի 9-ին պաշտոնապես ճանաչվեց Գաղութային մարմինը՝ Հայ գաղութային ընդհանուր միություն (Unign General Armeniana) անվանումով[9]:

Համայնքի առաջին հայկական դպրոցը կազմավորվեց դեռևս 1923 թ., երբ Մոնտևիդեոյի Սերրո կոչվող թաղամասում հայերի կողմից գնվեց մի շինություն, որը սկսեց ծառայել և՛ որպես եկեղեցի, և՛ որպես դպրոց: Այնուհետև հիմնվեցին Աբգարյան, Հայկազյան, Սահակյան, Ներսեսյան, Խրիմյան, իսկ ավելի ուշ՝ Մամիկոնյան, Մեսրոպյան, Հայկազյան վարժարանները: Սակայն, հարկ է նշել, որ այդ դպրոցների մի մասը երկար չգոյատևեց: 1940-ական թթ. սկզբին ուրուգվահայ գաղութում գործում էր ընդամենը վեց հայկական դպրոց՝ 430 աշակերտով[10]: Հետագա տարիներին ևս հայկական դպրոցների թիվը հետզհետե նվազում էր, ինչը պայմանավորված էր ուրուգվահայ նոր սերնդի գերակշիռ մասի իսպանախոս լինելու հանգամանքով և դրանից բխող՝ իսպանական վարժարաններ հաճախող հայ երեխաների թվաքանակի տարեցտարի աճով: Արդյունքում, 2010 թ. սկզբին Որուգվայում գործում էր միայն երկու ամենօրյա հայկական դպրոց: Մեկը՝ Նուբարյան–Ալեք Մանուկյան վարժարանն էր, որը հիմնվել էր Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանավորությամբ՝ 1971 թ. Մոնտևիդեոյում: Այն ուներ մանկապարտեզ, նախակրթարան և երկրորդական բաժին: Վարժարանում 2005 թ. սովորում էր 310 աշակերտ, իսկ 2010 թ.՝ շուրջ 250 աշակերտ[11]: Այստեղ դասավանդում էին հայոց լեզու և գրականություն, հայոց պատմություն: Վարժարանի կառուցման գործում մեծ ներդրում ունեին ազգային բարերարներ Միսաք և Արփինե Գոյումճ-

---

[9] Տես ՀՀ սփյուռքի նախարարություն, Ամերիկայի հայ համայնքների վարչություն. Ուրուգվայի հայ համայնքի անձնագիր, 2009 թ., էջ 14-15:
[10] Տես նույն տեղում:
[11] Տես ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, գործ N 140, էջ 14:

յանները: Այուսը, 1950-ական թթ. վերջից Մոնտեվիդեոյում՝ Կենտրոնական վարչական խորհրդի հովանավորությամբ գործող Ներսեսյան վարժարանի հիման վրա 1972 թ. կազմավորված Երվանդ Գսաճքյան վարժարանն էր՝ իր մանկապարտեզով և նախակրթարանով: Հայ երեխաներն այս վարժարան էին հաճախում 3 տարեկանից սկսած: 2010 թ. այստեղ սովորում էր շուրջ 100 աշակերտ[12]: Վարժարանում դասավանդում էին հայոց լեզու և գրականություն, կրոնագիտություն, հայոց պատմություն:

1938-1982 թթ. ուրուգվահայ համայնքն Արգենտինայի, Բրազիլիայի և Չիլիի հայ համայնքների հետ մեկտեղ ընդգրկված էր Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակության կազմում՝ կենտրոնը Բուենոս Այրես: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի կոնդակով 1983 թ. Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակությունը բաժանվեց երեք առանձին՝ Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի թեմերի: Հայաստանյաց առաքելական եկեղեցու Ուրուգվայի թեմի առաջնորդանիստը դարձավ 1964 թ. համագաղութային հանգանակությամբ Մոնտեվիդեոյում կառուցված և 1965-ին օծված Սուրբ Ներսես Շնորհալի միակ առաքելական եկեղեցին: Մոնտեվիդեոյում գործում են նաև մեկ կաթոլիկ և երկու ավետարանական եկեղեցիներ:

Ուրուգվայի հայ համայնքի պատմության մեջ պարբերական մամուլը շոշափելի դեր չի խաղացել: 1993 թ.-ից Մոնտեվիդեոյում հայերեն և իսպաներեն լեզուներով սկսեց հրատարակվել «Հայ ընտանիք» միակ պարբերաթերթը, որը, սակայն, երկար չգոյատևեց: Համայնքային լրատվամիջոցների դերը հիմնականում ստանձնել էին հայկական ռադիոկայանները: Հարություն Ռուբենյանի ջանքերով 1935 թ. հիմնադրվեց «Ռադիո-Արմենիա» ռադիոկայանը, որի ստեղծման 65 ամյակի կապակցությամբ 2000 թ. թողարկվեց հատուկ փոստային դրոշմանիշ: Սակայն 2007 թ. «Ռադիո-Արմենիան» փակվեց: Նույն թվականին «Ռադիո-Արմենիայի» հաղորդավար, լրագրող Դիեգո Կարամանուկյանի նախաձեռնությամբ հիմնվեց «Ռադիո-Արաքս» հայկական ռադիոկայանը, որը պետական որոշ-

---

[12] Տես նույն տեղում, գործ 143, էջ 220:

մամբ՝ տեղական մեկ այլ ալիքով ապահովում էր շաբաթական երեքուկեսժամյա հաղորդում: 2010-ական թթ. Կարո Հեքիմյանի գլխավորությամբ գործում է նաև ՀՀԴ Վռամյան ակումբի պաշտոնական ձայն՝ «Կոմիտաս» ամենօրյա ռադիոժամը:

1920-ական թթ. վերջից սկսեց ձևավորվել ուրուգվահայության հասարակական կյանքը, երբ աստիճանաբար կազմավորվեցին բազմաթիվ հայրենակցական, բարեսիրական-բարեգործական և մշակութային միություններ: Մասնավորապես՝ 1927 թ. հիմնվեցին Մարաշի, Սեբաստիայի, 1928-ին՝ Ադանայի, 1929-ին՝ Զեյթունի, 1930-ին՝ Հաճընի, Յոզղատի, 1933-ին՝ Կեսարիայի, 1935-ին՝ Ուրֆայի հայրենակցական միությունները: 1930-ականներից սկսած աշխույժ գործունեություն ծավալեցին բարեգործական կազմակերպությունները: Մասնավորապես, 1931-ից՝ Հայուհյաց բարեսիրաց միությունը, որն իր ծերանոցով գործում է մինչ օրս, 1934-ից՝ Հայ Կարմիր խաչի Մոնտեվիդեոյի մասնաճյուղը, 1938-ից՝ ՀԲԸՄ Մոնտեվիդեոյի մասնաճյուղը: Հիմնվեցին նաև մի շարք երիտասարդական կազմակերպություններ. 1939-ին՝ Հայ ուսանողական միությունը, «Մարո» օրիորդաց միությունը (1939-ին), 1940-ին՝ «Արմենիա», 1942-ին՝ «Փարամազ» միությունները: Ժամանակի ընթացքում բազմաբնույթ կազմակերպությունների մի մասը դադարեցրեց իր գործունեությունը, ստեղծվեցին նորերը: Ուրուգվայում գործում են նաև ՀՀԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպություններ՝ իրենց միություններով ու ակումբներով: Վերջինների թվին են պատկանում ՀՀԴ-ի «Վռամյան» կոմիտեն և «Արմենիա» երիտասարդական միությունը, ՍԴՀԿ-ի Հնչակյան տունը, ՌԱԿ-ի «Վահան Թեքեյան» ակումբը, ինչպես նաև ծախակողմյան (համայնավար) ուժերին միավորող Հայ ազգային կենտրոնը և Երևան մշակութային հիմնարկը, ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի, ՀՄԸՄ-ի, ՀՄՄ-ի մասնաճյուղերը: ՀԲԸՄ հովանավորությամբ գործում են միության երիտասարդական լիգան և Հայուհյաց բարեսիրական միությունը, ինչպես նաև «Կամք» և «Երևան 50» սկաուտական խմբերը: Գործում է նաև համադրող մարմնի բնույթ կրող Ուրուգվայի Հայկական բազմամիութենական կազմակերպությունը, որն իր մեջ համախմբում է Հնչակյան տունը, Հայ ազգային կենտրոնը, Արմենիա հրապարակի և պողոտա-

յի հանձնախումբը, Մարաշի հայրենակցական միությունն ու ՀԲԸՄ-ի Մոնտևիդեոյի մասնաճյուղը: Հարկ է նշել, որ հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունների մեծ մասը երկրում մեծ հեղինակություն էր վայելում:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության հիմնադրման 100-ամյա հոբելյանի առթիվ Ուրուգվայի կառավարության կողմից 1987 թ. սկսվեց հատուկ փոստային դրոշմանիշի թողարկում: Այս առումով նշենք, որ հատուկ փոստային դրոշմանիշ թողարկվեց նաև 2001-ին՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի կապակցությամբ[13]:

Վերոնշյալ բազմաբնույթ կազմակերպությունների ի հայտ գալը նպաստեց ուրուգվահայ գաղութի ոչ միայն հասարակական-քաղաքական, այլև մշակութային կյանքի զարգացմանը: Վերջինի ձևավորումը սկիզբ առավ 1930-ական թթ.: Մասնավորապես՝ 1932 թվականից համայնքում աստիճանաբար սկսեց աշխուժացում ապրել թատերական կյանքը, երբ Հովհաննես Զարիֆյանի ջանքերով՝ Մոնտևիդեոյում, հայ դերասանների մասնակցությամբ, մի քանի անգամ բեմադրվեց Վ. Շեքսպիրի «Օթելլո» ողբերգությունը: 1940 թ. Հ. և է. Արծիվների աշխատասիրությամբ մայրաքաղաքի հայ համայնքի դատին ներկայացվեց «Հարսանիքի նվեր» օպերետը:

Ուրուգվահայության մշակութային կյանքի կարևոր իրադարձություններից էր Սուրաբյան ամուսինների ջանքերով Մոնտևիդեոյում 1946 թ. առաջին անգամ Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի բեմադրումը: Գաղութի մշակութային կյանքը բովանդակալի էին դարձնում նաև 1935-ին հիմնված «Կոմիտաս» երգչախումբը, ՀԲԸՄ «Անդիմակ» թատերախումբը, «Կռունկ» երգչախումբը, «Գայանե» և «Շիրազ» պարախմբերը, «Երևան-50» և «Արամ Խաչատրյան» նվագախմբերը: Իրենց կատարողական բարձր վարպետությամբ աչքի էին ընկնում դաշնակահարներ Մարտիրոս Բայասլյանը, Ադրինե Քեոլյանը, Քնարիկ Քեկլիկյանը, Անթառամ Ահարոնյանը, ջութակահար Ավետիս Կարամանուկյանը, երգիչներ Կարպիս Գրաֆիրյանը, Գրիգոր Նիկողոսյանը, Պարգև Ավշարյանը, Աղասի Սանթուրյանը,

---

[13] Տես Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 615:

Հայկուհի Ստեփանյանը, Հակոբ Պոյաճյանը, Սեդա Մաճառյանը, դերասաններ Արմեն Սիրիան և Լևոն Բուռունսուզյանը, երաժշտագետ Կորյուն Սհարոնյանը: Կերպարվեստի բնագավառում լայն ճանաչում էին վայելում գեղանկարիչ Արա Գազանճյանը և քանդակագործ-գեղանկարիչ Ներսես Հունանյանը, որի անունով է կոչվում Մոնտեվիդեոյի փողոցներից մեկը:

Ուրուգվահայ գաղութի համայնքային կառույցների ձևավորմանը զուգընթաց աճում էր նաև նրա կշիռն ու դերը երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Դրա ակնառու արգասիքներից էր 1965 թ. Ուրուգվայի կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումն ու ապրիլի 24-ը «Հայ նահատակների հիշատակի օր» հռչակելը: Ընդ որում, Ուրուգվայը նման որոշում ընդունած առաջին երկիրն էր աշխարհում: Մոնտևիդեոյի կենտրոնական հրապարակներից մեկը, ուր կանգնեցված էր Մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշակոթող, 1971 թ. անվանակոչվեց «Armenia», իսկ 1972-ին՝ մայրաքաղաքի ծովափնյա մի պողոտա՝ «Rambla-Armenia»: «Armenia» անվանավեց նաև Պրիապոլիս քաղաքի հրապարակներից մեկը: Հայոց ցեղասպանության 90-ամյակի շրջանակներում Ուրուգվայի մայրաքաղաքում 2005 թ. բացվեց «La plaza de genocidio de los armenios» հրապարակը՝ հատուկ հուշաքարով: Այս նախաձեռնությունը ներկայացրել էր քաղաքի օրենսդիր մարմնի անդամ Ռաֆֆի Ունանյանը: Հայոց ցեղասպանության 95 ամյակի կապակցությամբ 2010 թ. ապրիլի 24-ին Ուրուգվայի ՀԲԸՄ ու ՍԴՀԿ տեղական կառույցների, Հայ ազգային կենտրոնի և «Armenia» հրապարակի հանձնախումբի նախաձեռնությամբ Մոնտեվիդեոյի «Armenia» հրապարակում տեղադրվեց՝ ուրուգվահայ բարերար Կառլոս Կեցոյանի հովանավորությամբ Հայաստանից բերված Խաչքար, որի բացումը կատարեց Ուրուգվայի այն ժամանակվա նախագահ Ժոզե Ալբերտո Մուհիկա Կորդանոն: Բացման արարողությանը ներկա էին նաև երկրի կառավարության և հայ համայնքի երևելի ներկայացուցիչներ[14]:

Այսպիսով, ուրուգվահայ գաղութը հայ գաղթաշխարհի ամենակազմակերպված համայնքներից է, որի կառույցները հետևողական

---

[14] ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական բաժին, գործ N 143, էջ 75-78:

աշխատանքներ են ծավալում տեղի հայության ազգային ինքնության, հոգևոր արժեքների և պատմամշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ:

ZARUHI AZIZBEKYAN

FORMATION AND DEVELOPMENT OF THE ARMENIAN COMMUNITY IN URUGUAY (THE END OF THE XIX CENTURY - BEGINNING OF XXI CENTURY)

SUMMARY

The first reference of Armenians in Uruguay dates back to 1890. The main wave of immigration of Armenians into Uruguay took place at the beginning of 20s of XX century as a result of influx of Armenian refugees, survivors of the Armenian Genocide from Western Armenia to many countries of the world, including Uruguay. According to the census of 1931, four thousand Armenians already lived in Uruguay. During this period formation of the Armenian community in Uruguay took place. A number of Armenian charitable and public organizations were founded at the end of the 30s of the XXc. Armenian traditional parties started to operate in Uruguay. At 60s numerous Armenian organizations were working in Uruguay whose primary goal was recognition and condemnation of the Armenian Genocide by the Uruguayan Government. On April 20 1965 Uruguay became the first country in the world to recognize officially the Armenian Genocide.

At the beginning of the XXI century about 20 thousand Armenians were living in Uruguay.

ЗАРУИ АЗИЗБЕКЯН

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ УРУГВАЯ
(КОНЕЦ XIX ВЕКА - НАЧАЛО XXI ВЕКА)

РЕЗЮМЕ

Первые упоминания об армянах в Уругвае датируются 1890 годом. Основная волна иммиграции армян в Уругвай пришлась на начало 20-х годов XX века, когда из Западной Армении в разные страны мира, в том числе и в Уругвай, хлынул поток беженцев-армян, спасшихся от геноцида. По данным переписи населения 1931 г. в Уругвае проживало уже 4 тыс. армян. В этот период происходит формирование армянской общины Уругвая. В конце 1930-х годов был основан ряд армянских благотворительных и общественных организаций. Начали действовать армянские традиционные партии. К 1960-ым годам в Уругвае уже действовали многочисленные армянские организации, основной целью которых стало признание и осуждение уругвайским правительством геноцида армян, в результате чего 20 апреля 1965 г. Уругвай первым в мире официально признал геноцид.

В начале XXI века в Уругвае проживало около 20 тыс. армян.